

**ՀՀ Արձավիրի մարզի Լենուղի համայնքի
ղեկավարի 2012թ.-ի տարեկան
հաշվետվություն**

15.01.2013թ.

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ և հրավիրվածներ Ձեզ են ներկայացնում Լենուղի գյուղում կատարված մեկ տարվա աշխատանքների հաշվետվությունը:

Գյուղատնտեսություն:

Լենուղի գյուղը ունի 650հա գյուղ նշնակության հողեր, որտեղ հիմնականում մշակվում են պտղատու և խաղողի տեխնիկական սորտի այգիներ: Գարնանը մաքրվել և վերանորոգվել է ներտնտեսային ոռոգման ցանցը շուրջ 35 կմ: Ստացվել է 80,0տ. ազոտական պարարտանյութ 6000դրամ մեկ պարկը և 30տ. դիզ վառելիք 350դրամ լիտրը արժեքով բաշխվել է բոլոր հողագործներին:

Կրթություն և մշակույթ

Գյուղն ունի գեղեցիկ վերջերս վերանորոգված դպրոցի շենք, որտեղ սովորում է 280 աշակերտ: Դպրոցը համալրված է բարձրորակ և որակյալ մասնագետներով: Գյուղապետարանը միշտ իր աջակցությունն է ցուցաբերել դպրոցին: Դպրոցի շենքում գյուղապետարանի հովանավորության գործում է նախակրթարան իր 45 երեխաների թվաքանակով:

Անմխիթար վիճակում է գյուղի կուլտուրայի տունը, որի պատճառով, ոչ մի միջոցառում չի անցկացվում կուլտուրայի տանը:

Տրանսպորտ

Գյուղը սպասարկում է երթուղային տաքսիներ, որոնք գյուղից մեկնում են յուրաքանչյուր 20րոպեում: Սկսվել է միջ համայնքային ճանապարհի ասվալտապատման աշխատանքները:

Կոմունալ տնտեսություն

Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում գյուղի շրջիկ մեքենան տեղափոխում է գյուղի աղբը 2կմ հեռավորության վրա գտնվող աղբանոց: Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ներտնտեսային ցանցը, որը կառուցվել է 1962թ.: Երեք խորքային նասոսներ աշխատելով 8-10 ժամ գյուղի վերջամասերում նույնիսկ խմելու ջուր չեն կարողանում վերցնել:

Ֆինանսներ

Եկամուտների մասով՝ վարչական բյուջեով նախատեսված 26586,0 հազար դրամից փաստացի կատարվել է 26592,4 հազար դրամ, կատարողական %-ը

100 որից սեփական եկամուտների՝ 16030,5 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 16036,9 հազար դրամ կատարվել է 100% -ով:
Պետբյուջեից ստացված դոտացիա-10555,5 հազար դրամից մուտք է եղել 10555,5 հազար դրամ:

Ներկայացվում է սեփական եկամուտները ըստ հոդվածների՝

1. Հողի հարկ՝ նախատեսված 8800,5 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 8777,9 հազ. դրամ
2. Գույքահարկ շենք շինություն նախատեսված 83,0 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 143,4 հազ. դրամ
3. Ֆիզ. անձ և իրավ. անձանձ փոխադրամիջոցների գ/հարկ նախատեսված 3213,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 3796,7 հազար դրամ
4. Վարձակալական վարձավճարից նախատեսված 2200,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 1910,0 հազ. դրամ
5. Մատուցվող ծառ. դիմաց վճար նախատեսված 1600,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 1406,0 հազար դրամ:
6. Այլ եկամուտներ 0 մուտքագրվել է 2,9 հազ. դրամ

Ծախսեր՝

Ներկայացվում է վարչական բյուջեով ֆինանսական ծախսերը ըստ հոդվածների

1. Աշխատավարձ նախատեսված 12480,0 հազար դրամից փաստացի ծախս 12427,0 հազար դրամ
2. Պարտադիր սոց վճար նախատեսված 2676,0 հազար դրամից փաստացի ծախս 2416,0 հազար դրամ
3. Երիտասարդական ծախսեր նախատեսված 1130,0 հազար դրամից փաստացի ծախս 1130,0 հազար դրամ
4. Գրասենյակային ծախսեր նախատեսված 236,0 հազար դրամից փաստացի ծախս 210,0 հազար դրամ
5. Տրանսպորտային ծախսեր նախատեսված 880,0 հազար դրամ փաստացի ծախս 880,0 հազար դրամ
6. Կապի ծախսեր նախատեսված 440,0 հազար դրամից փաստացի ծախս 440,0 հազար դրամ

7. Ջեռուցման էլ.էներգիա նախատեսված 460,0 հազար դրամից փաստացի ծախս 460,0 հազար դրամ
8. Գործողում նախատեսված 100,0 հազար դրամից փաստացի ծախս 100,0 հազար դրամ
9. Տեղեկատվական ծառայություն նախատեսված 120,0 հազար դրամից փաստացի ծախս 80,0 հազար դրամ
10. Սոց օգնություն նախատեսված 1850,0 հազար դրամից փաստացի ծախս 1850,0 հազար դրամ
11. էլ.էներգիա խ/ ջուր նախատեսված 3520,0 հազար դրամից փաստացի ծախս 3451,0 հազար դրամ
12. Ընդհանուր բնույթի այլ ծախսեր՝ նախատեսված 320,0 հազար դրամից փաստացի ծախս 318,0 հազար դրամ
13. Դրամաշնորհի տրամադրում նախակրթական ծրագրին նախատեսված 1700,0 հազար դրամից փաստացի ծախս 1700,0 հազար դրամ
14. Նվիրատվություն երիզասարդական նախաձեռնություն նախատեսված 250,0 հազար դրամ փաստացի ծախս 250,0 հազար դրամ:


Ընդամենը վարչական բյուջեով ծախսեր 25712,0 հազար դրամ

2012 թվականի տարեկան ֆոնդային բյուջեով նախատեսված 2800,0 հազ. դրամից փաստացի ծախս 836,9 հազար դրամ՝ որից 390,0 հազ. դրամ համակարգչի ձեռք բերում, 442,0 հազար դրամ խ/հ պոմբի վերանորոգում:

Գյուղի հիմնահարցերն են՝

1. Խմելու ջրի ներտնտեսային ցանց.
2. Կուլտուրայի տան վերանորոգում.
3. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:

ԼԵՆՈՒՂՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ